ՎԴ/7379/05/21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

20 հունվարի 2022 թվական քաղաք Երևան

ուսումնասիրելով ըստ հայցի Երեմիա Ասատրյանի ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության՝ 2021 թվականի հունիսի 24-ի «Սնանկության գործով կառավարիչների որակավորման ստուգման խնդրի լուծման փուլի մասնակից Երեմիա Ռուբենի Ասատրյանի բողոքի վերաբերյալ» որոշումը մասնակի՝ միջամտող դրույթների մասով, վերացնելու և պատասխանողին հայցվորի բողոքը բավարարելու, սնանկության գործով կառավարիչների որակավորման ստուգման 2-րդ՝ խնդրի լուծման փուլում անցողիկ միավորով գնահատելու և սնանկության գործով կառավարիչների որակավորման ստուգման 3-րդ՝ հարցազրույցի փուլ անցած մասնակիցների ցուցակում ընդգրկելու մասին բարենպաստ վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու և որպես հետևանք՝ պատասխանողին հայցվորին սնանկության գործով կառավարիչների որակավորման ստուգման 3-րդ՝ հարցազրույցի փուլին մասնակցել թույլատրելուն պարտավորեցնելու, իսկ դրա անհնարինության դեպքում լրացուցիչ հարցազրույցի փուլ կազմակերպելուն և հայցվորին հարցազրույցին մասնակցել թույլատրելուն պարտավորեցնելու պահանջների մասին թիվ ՎԴ/7379/05/21 գործով ենթակայության մասին վեճը

լուծելու համար Վճռաբեկ դատարանի նախագահին դիմելու վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի հունվարի 11-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Երեմիա Ասատրյանը (այսուհետ նաև՝ Հայցվոր) 2021 թվականի հուլիսի 1-ին հայցադիմում է ներկայացրել Վարչական դատարան ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության, որով պահանջել է 2021 թվականի հունիսի 24-ի «Մնանկության գործով կառավարիչների որակավորման ստուգման խնդրի լուծման փուլի մասնակից Երեմիա Ռուբենի Ասատրյանի բողոքի վերաբերյալ» որոշումը մասնակի՝ միջամտող դրույթների մասով, վերացնել և պարտավորեցնել պատասխանողին ընդունել Հայցվորի բողոքը բավարարելու, սնանկության գործով կառավարիչների որակավորման ստուգման 2-րդ՝ խնդրի լուծման փուլում անցողիկ միավորով գնահատելու և սնանկության գործով կառավարիչների որակավորման ստուգման 3-րդ՝ հարցազրույցի փուլ անցած մասնակիցների ցուցակում ընդգրկելու մասին բարենպաստ վարչական ակտ և որպես հետևանք՝ պարտավորեցնել պատասխանողին թույլատրել Հայցվորին մասնակցել սնանկության գործով կառավարիչների որակավորման ստուգման 3-րդ՝ հարցազրույցի փուլին, իսկ դրա անհնարինության դեպքում պարտավորեցնել պատասխանողին կազմակերպել լրացուցիչ հարցազրույցի փուլ և թույլատրել Հայցվորին մասնակցել հարցազրույցին:

2. Վարչական դատարանը (դատավոր՝ Ա.Ավագյան) 2021 թվականի հուլիսի 8-ին որոշում է կայացրել հայցադիմումը վարույթ ընդունելու մասին: Նույն օրվա մեկ այլ որոշմամբ Վարչական դատարանը հայցի ապահովման միջոց ձեռնարկելու մասին Հայցվորի միջնորդությունը մերժել է:

3.Վարչական դատարանը 2021 թվականի դեկտեմբերի 1-ին որոշում է կայացրել հայցադիմումը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան վերահասցեագրելու մասին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(…) [Մ]նանկության գործով կառավարիչը հանրային*

ծառայող չէ, քանի որ հանրային ծառայողներ են հանդիսանում պետական ծառայություն, համայնքային ծառայություն իրականացնող և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձինք, ավելին՝ հանրային ծառայող լինելու հանգամանքը խոչընդոտ է հանդիսանում որպես կառավարիչ որակավորվելու համար: Միաժամանակ սնանկության գործով կառավարիչ հանդիսանում է անհատ ձեռնարկատեր ֆիզիկական անձը, ընդ որում, որպես անհատ ձեռնարկատեր հաշվառումից հանելու հանգամանքը հիմք է հանդիսանում կառավարչի գործունեությունը կասեցնելու, ինչպես նաև կառավարչի որակավորումը դադարեցնելու համար: Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ սնանկության գործով կառավարչի որակավորումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը՝ որակավորման ստուգման միջոցով, որպիսի ստուգումն անցկացնում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին կից խորհրդակցական մարմին հանդիսացող որակավորման հանձնաժողովը:

Վերոգրյալի հիման վրա Դատարանը գտնում է, որ սնանկության գործով կառավարչի գործունեությունը չի կարող համարվել հանրային ծառայություն, իսկ դրան առնչվող հարաբերությունները չեն կարող դիտարկվել որպես հանրային բնույթի իրավահարաբերություններ:

Հետևաբար Դատարանը եզրահանգում է, որ սնանկության գործով կառավարչի՝ հանրային ծառայող չհանդիսանալու, ըստ այդմ՝ սնանկության գործով կառավարչի որակավորման գործընթացը հանրային բնույթի իրավահարաբերություններ չհանդիսանալու, ինչպես նաև սնանկության գործով կառավարչի որակավորումը խորհրդակցական մարմին հանդիսացող որակավորման հանձնաժողովի կողմից իրականացվելու պայմաններում Երեմիա Ասատրյանի և ՀՀ արդարադատության նախարարության միջև ծագած իրավահարաբերությունները հանրային բնույթ չունեն:

Բացի այդ, Դատարանը փաստում է, որ Երեմիա Ասատրյանի և ՀՀ արդարադատության նախարարության միջև ծագած իրավահարաբերությունները չեն ծագել ՀՀ արդարադատության նախարարության՝ որպես պետական մարմնի, իրականացրած գործադիր-կարգադրիչ գործունեության ընթացքում, այսինքն՝

դրանք չեն հանդիսանում հանրային իրավահարաբերություններ, այլ հանդիսանում են մասնավոր իրավահարաբերություններ:

Նման պայմաններում Դատարանը գտնում է, որ Երեմիա Ասատրյանի կողմից ներկայացված հայցադիմումի պահանջն ընդդատյա չէ ՀՀ վարչական դատարանին, որպիսի պայմաններում հայցադիմումը ենթակա է վերահասցեագրման ըստ ընդդատության՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի համաձայն՝ հայցը հարուցվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի դատարան»:

4. Թիվ ՎԴ/7379/05/21 գործը 2021 թվականի դեկտեմբերի 21-ին մակագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Դ.Մխեյանին:

5. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Դ.Մխեյան) 2022 թվականի հունվարի 11-ի որոշմամբ գործի ենթակայության շուրջ ծագած վեճը լուծելու նպատակով գործն ուղարկել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ ներկայացնելով հետևյալ պատճառաբանությունը. *«(…) ակնհայտ է, որ վեճի առարկա է հանդիսանում սնանկության կառավարչի որակավորման իրավահարաբերությունը, որի մի կողմում հանդես է գալիս որակավորման ենթակա անձը՝ ի դեմս սույն գործով հայցվորի, մյուս կողմում՝ ՀՀ արդարադատության նախարարությունը՝ ի դեմս որակավորման հանձնաժողովի, որպիսի պարագայում խոսք չի կարող լինել կողմերի իրավաբանական հավասարության վրա և կամքի ինքնավարության վրա հիմնված իրավահարաբերության մասին, որոնք մասնավոր քաղաքացիաիրավական տիրույթը որոշող առանցքային սկզբունքներն են:*

ՀՀ արդարադատության նախարարի 2020 թվականի մարտի 13-ի թիվ 112-Ն հրամանի հավելված 1-ի 23-րդ և 24-րդ կետերի համաձայն՝ վերջինիս որոշումները, գործողությունները կամ անգործությունը հանդիսանում են բողոքարկման ենթակա ակտեր, որոնք քննարկվում են արդարադատության նախարարի կողմից՝ ի կատարումն իր հանրային գործառույթների, այսինքն՝ նշված գործընթացն

այլ կերպ բնորոշելը, քան վերադասության կարգով վարչական բողոք ներկայացնել, ըստ էության, հնարավոր չէ:

(…) Հանձնաժողովն օրենքով և դրա հիման վրա ընդունված ենթաօրենսդրական ակտով օժտված է հանրային իշխանական լիազորություններով, որոնք արտահայտվում են գնահատման, դրա առնչությամբ բողոքների քննության և որոշումների կայացման և այլ գործողությունների իրականացմամբ.

(…) ինչպես արդարադատության նախարարությունը, այնպես էլ որակավորման հանձնաժողովը չունեն քաղաքացիական իրավահարաբերությանը բնորոշ կամքի ինքնավարության դրսևորման ազատություն և անձի դիմումի հիման վրա պարտավոր են իրականացնել իրենց վերապահված համապատասխան հանրային գործառույթը.

(…) սնանկության կառավարչի որակավորման գործընթացը հետապնդում է հստակ հանրային շահ, այն է՝ սնանկության գործընթացին պատշաճ մասնագիտացված անձի մասնակցությունն ապահովելը՝ դրանով իսկ ապահովելով նշված գործընթացի մասնակիցների (պարտատերերի և պարտապանների) իրավունքների և օրինական շահերի՝ օրենքին համապատասխան իրականացումը:

(…)

Սույն դեպքում վիճարկվում է հանրային իրավահարաբերության տիրույթում գտնվող որոշում՝ վարչական ակտ, որն ըստ Հայցվորի ենթադրության, իր համար առաջացրել է կոնկրետ բացասական փաստական հետևանքներ»:

6. Թիվ ՎԴ/7379/05/21 գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2022 թվականի հունվարի 13-ին:

Վճռաբեկ դատարանի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը.

7. Սույն գործով Վճռաբեկ դատարանի նախագահի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *արդյո՞ք ՀՀ արդարադատության նախարարության սնանկության գործով կառավարիչների որակավորման ստուգման հանձնաժողովի*

կողմից սնանկության գործով կառավարիչների որակավորման ստուգմանն ուղղված գործողություններն իրենցից ներկայացնում են վարչարարություն:

8. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:*

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:*

9. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի:*

2. Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (...) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի (...)»:

Նույն օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *«Առաջին ատյանի դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով»:*

10.ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը (...)»:*

Նույն օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանը, գործի քննության ցանկացած փուլում պարզելով, որ տվյալ հայցադիմումի պահանջն ընդդատյա չէ իրեն, այն պատճառաբանված որոշմամբ վերահասցեագրում է ըստ ընդդատության»:*

11. Սույն որոշման 8-10-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին է վերապահել այն բոլոր գործերի քննությունը, որոնց քննությունը վերապահված չէ մասնագիտացված դատարաններին, այդ թվում՝ վարչական դատարանին: Միևնույն ժամանակ օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որում ներառված են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերից ծագող գործերը: Փաստորեն, որևէ դատական գործի՝ վարչական կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է՝ հիմք ընդունելով այն իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է դատարանի քննությանը:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ օրենսդիրը վարչական դատարանի ընդդատության և առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի ենթակայության կանոնների խախտման դեպքում նախատեսել է տարբեր իրավական հետևանքներ:

12. Այսպես՝ ի տարբերություն քաղաքացիական դատավարության, որտեղ ենթակայության կանոնների խախտումը հայցադիմումի ընդունելության փուլում հանգեցնում է հայցադիմումի ընդունումը մերժելուն, վարչական դատավարությունում հայցվորի կողմից ընդդատության կանոնները չպահպանելու հետևանքը հայցադիմումը վերահասցեագրելու՝ վարչական դատարանի լիազորության կիրառումն է: Վերոգրյալ կարգավորումների տարբերությունը պայմանավորված է վարչական արդարադատության առանձնահատկություններով, մասնավորապես՝ վարչական դատավարությունում դատարանի ակտիվ դերակատարմամբ:

Այսպիսով, յուրաքանչյուր դեպքում վարչական դատարանը պարտավոր է պարզել՝ արդյոք կոնկրետ գործն ընդդատյա է (ենթակա է) տվյալ դատարանին, թե՝ ոչ, և նշված հարցի կապակցությամբ բացասական եզրահանգում կատարելու դեպքում պարտավոր է հայցադիմումը վերահասցեագրել ըստ ընդդատության: Նույն իրավիճակում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը

պարտավոր է դրա ընդունումը մերժել՝ գործը քաղաքացիական դատավարության կարգով քննության ենթակա չլինելու հիմքով:

13. Հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման հարցին մանրամասն անդրադարձ է կատարվել Վճռաբեկ դատարանի՝ *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրցավոր սեփականության գործակալության վարչական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի որոշմամբ*[1]:

14. Սույն գործով վիճելի իրավահարաբերության բնույթը պարզելու համար անհրաժեշտ է վերլուծել ՀՀ արդարադատության նախարարության սնանկության գործով կառավարիչների որակավորման հանձնաժողովի կողմից անցկացվող սնանկության գործով կառավարիչների որակավորման ստուգման գործընթացին վերաբերող հարաբերությունները կարգավորող իրավական նորմերը: Այսպես.

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Որպես կառավարիչ կարող է որակավորվել 63 տարին չլրացած այն անձը, որն ունի բարձրագույն կրթություն, որակավորման համար դիմելու օրվան նախորդած վերջին հինգ տարվա ընթացքում ունի իրավաբանական, հաշվապահական կամ այլ տնտեսագիտական գործունեության ոլորտում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի սահմանած կարգով անցել է համապատասխան ուսուցում»:*

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Որակավորումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը: Որակավորումն իրականացվում է որակավորման ստուգման միջոցով, որն անցկացնում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին կից խորհրդակցական մարմին հանդիսացող որակավորման հանձնաժողովը»:*

Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ *«Որակավորման հանձնաժողովի կազմավորման և գործունեության կարգը, որակավորման ստուգմանը մասնակցելու դիմումին ներկայացվող պահանջները, որակավորման ստուգմանը մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերի ցանկը, որակավորման ստուգման և*

[1] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/0830/05/14 որոշումը:

որակավորում շնորհելու ընթացակարգը սահմանվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի ենթաօրենադրական նորմատիվ իրավական ակտով»:

15. ՀՀ արդարադատության նախարարի 2020 թվականի մարտի 13-ի «Սնանկության գործով կառավարչի որակավորման հանձնաժողովի կազմավորման և գործունեության կարգը, որակավորման ստուգմանը մասնակցելու դիմումին ներկայացվող պահանջները, որակավորման ստուգմանը մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերի ցանկը, որակավորման ստուգման և որակավորում շնորհելու ընթացակարգը սահմանելու մասին» թիվ 112-Ն հրամանի (այսուհետ նաև՝ Հրաման) 1-ին կետով սահմանվել է սնանկության գործով կառավարչի որակավորման հանձնաժողովի կազմավորման և գործունեության կարգը՝ համաձայն թիվ 1 հավելվածի, որի 1-ին կետի համաձայն՝ *«Սնանկության գործով կառավարչի որակավորման հանձնաժողովը (…) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին (…) կից խորհրդակցական մարմին է, որը անցկացնում է սնանկության գործով կառավարիչների որակավորման ստուգումը (…)»*:

Նույն հավելվածի 9-րդ կետի համաձայն՝ «*Հանձնաժողովը՝*

1) կազմակերպում և անցկացնում է որակավորման ստուգումները.

2) ամփոփում է որակավորման ստուգման արդյունքները.

3) նախարարին ներկայացնում է առաջարկություն սնանկության գործով կառավարչի որակավորում շնորհելու վերաբերյալ.

4) իրականացնում է սույն հրամանի հավելված N 3-ով սահմանված այլ լիազորություններ»:

Հրամանի 3-րդ կետով սահմանվել է սնանկության գործով կառավարչի որակավորման ստուգման և որակավորում շնորհելու ընթացակարգը՝ համաձայն թիվ 3 հավելվածի, որի 79-րդ կետի համաձայն՝ *«Հանձնաժողովն իր որոշմամբ հաստատում է սույն ընթացակարգի 78-րդ կետում նշված մասնակիցների ցանկը և առաջարկում նախարարին՝ ցանկում նշված մասնակիցներին շնորհել սնանկության գործով կառավարչի որակավորում»*:

Նույն հավելվածի 81-րդ կետի համաձայն՝ *«Հանձնաժողովի առաջարկության հիման վրա նախարարը հինգ աշխատանքային օրվա ընթացքում շնորհում է սնանկության գործով կառավարչի որակավորում կամ մերժում է որակավորման շնորհումը»:*

Նույն հավելվածի 84-րդ կետի համաձայն՝ *«Որակավորման ստուգման արդյունքներով որակավորման շնորհումը մերժելու վերաբերյալ որոշումները կարող են բողոքարկվել դատական կարգով»:*

16. Սույն որոշման 14-15-րդ կետերում վկայակոչված իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ սնանկության գործով կառավարչի որակավորումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը՝ որակավորման ստուգման միջոցով, որն անցկացնում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին կից խորհրդակցական մարմին հանդիսացող որակավորման հանձնաժողովը: Վերջինս կազմակերպում և անցկացնում է որակավորման ստուգումները, այնուհետև ամփոփելով դրա արդյունքները, նախարարին ներկայացնում է առաջարկություն՝ սնանկության գործով կառավարչի որակավորում շնորհելու վերաբերյալ, որպիսի առաջարկության հիման վրա, նախարարը, հինգ աշխատանքային օրվա ընթացքում, շնորհում է սնանկության գործով կառավարչի որակավորում կամ մերժում է որակավորման շնորհումը:

Վերոգրյալից հետևում է, որ ՀՀ արդարադատության նախարարը սնանկության գործով կառավարչի որակավորում շնորհելու կամ որակավորման շնորհումը մերժելու հարցը լուծում է՝ հիմք ընդունելով որակավորման հանձնաժողովի առաջարկությունը: Ընդ որում, որակավորման հանձնաժողովի գործառույթներն ուղղված են սնանկության գործով կառավարչի որակավորման ստուգման անցկացմանը և դրա արդյունքում համապատասխան թեկնածուների առաջադրմանը, որպիսի գործընթացի արդյունքում է միայն հնարավոր համապատասխան թեկնածուին որակավորում շնորհելը:

Հետևաբար՝ որակավորման հանձնաժողովը որակավորման ստուգում իրականացնելիս հանդես է գալիս որպես հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ: Վերջինիս գործողություններն ուղղված են

ՀՀ արդարադատության նախարարության կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացմանը նպաստելուն, և հանդիսանում են սնանկության գործով կառավարիչների որակավորման՝ որպես առանձին տեսակի վարչական վարույթի իրականացմանն ուղղված գործընթացի բաղկացուցիչ մասը:

17. Ընդ որում, հարկ է նշել նաև, որ Վճռաբեկ դատարանը *Փառանձեմ Գևորգյանն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության թիվ ՎԴ/2731/05/11 վարչական գործով 05.04.2013 թվականի որոշմամբ* արձանագրել է հետևյալը. *«(…) աուդիտորների որակավորման քննությունների անցկացումը՝ որպես վարչարարության առանձին տեսակ, ունի իր առանձնահատկությունները:*

Առաջին հերթին այն իրականացվում է մասնագիտական գիտելիքների ստուգման ճանապարհով, որի արդյունքների հիման վրա միայն կարող է ընդունվել համապատասխան որոշում: Այսինքն՝ վարչարարության այս տեսակի պայմաններում միայն դիմողի կողմից ներկայացված փաստաթղթերը բավարար չեն համապատասխան վարչական ակտ կայացնելու համար:

Երկրորդ. աուդիտորների որակավորումն իրականացվում է քննությունների միջոցով: Այսինքն՝ վարչարարության այս տեսակն ունի իրականացման հատուկ կարգ քննության ձևաչափով, իսկ քննության ընթացքում համապատասխան ձևով ստուգվում են անձի մասնագիտական գիտելիքները: Քննությունից բացի այլ եղանակով վարչարարության այս տեսակն իրականացվել չի կարող:

Երրորդ. աուդիտորների որակավորման քննություններն անցկացնում է լիազորված մարմնի կողմից ստեղծված աուդիտորների որակավորման հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով): Այսինքն՝ միայն այդ մարմնի ձևավորման պարագայում է հնարավոր համապատասխան վարչարարության իրականացում»[2]:

18. Հարկ է արձանագրել, որ թեև վկայակոչված իրավական դիրքորոշումը վերաբերում է աուդիտորների որակավորման քննություններին, սակայն այն հավասարապես կիրառելի է նաև սույն պարագայում: Այսպես, սնանկության գործով կառավարիչների որակավորման ստուգումը, առաջին հերթին, իրականացվում է

[2] Տե՛ս, *mutatis mutandis*, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի ապրիլի 5-ի թիվ ՎԴ/2731/05/11 որոշումը:

մասնագիտական գիտելիքների ստուգման ճանապարհով, որի արդյունքների հիման վրա էլ ՀՀ արդարադատության նախարարի կողմից ընդունվում է որակավորում շնորհելու մասին համապատասխան որոշում: Հետևաբար՝ սնանկության գործով կառավարիչների որակավորման՝ որպես վարչարարության առանձին տեսակի դեպքում նույնպես դիմողի կողմից ներկայացված փաստաթղթերը բավարար չեն համապատասխան վարչական ակտ կայացնելու համար: Վարչարարության այս տեսակին նույնպես բնորոշ է դրա իրականացման հատուկ կարգը՝ մասնավորապես քննությունների միջոցով անձի մասնագիտական գիտելիքների ստուգումը, որի դեպքում է միայն հնարավոր իրականացնել վարչարարության այս տեսակը: Բացի այդ, սնանկության գործով կառավարիչների որակավորման ստուգումն անցկացնում է լիազորված մարմնի կողմից ստեղծված որակավորման ստուգման հանձնաժողովը, որպիսի մարմնի ձևավորման պարագայում է հնարավոր համապատասխան վարչարարության իրականացումը:

19. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ Հայցվորի կողմից, ըստ էության, վիճարկվում է սնանկության գործով կառավարիչների որակավորման հանձնաժողովի գործողությունների իրավաչափությունը: Հետևաբար, հիմք ընդունելով սույն որոշման 16-18-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումները, ինչպես նաև այն հանգամանքը, որ օրենսդրի կողմից նախատեսվել է որակավորման ստուգման արդյունքներով որակավորման շնորհումը մերժելու վերաբերյալ որոշումների՝ որպես վերոնշյալ վարչական վարույթը եզրափակող վարչական ակտի, դատական կարգով բողոքարկման հնարավորություն՝ չնախատեսելով հանդերձ նախքան վարչական վարույթի եզրափակվելն անձի իրավունքների և օրինական շահերի՝ դատական կարգով բողոքարկման իրավական հնարավորություն՝ պետք է արձանագրել, որ անձը տվյալ դեպքում չպետք է զրկվի իր դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման հնարավորությունից, և վերջինս պետք է կարողանա վարչադատական կարգով քննության առարկա դարձնել հանձնաժողովի գործողությունների իրավաչափությունը:

Վերոգրյալի հաշվառմամբ, նկատի ունենալով, որ սույն գործով Երեմիա Ասատրյանի և ՀՀ արդարադատության նախարարության միջև ծագած իրավական

վեճը բխում է հանրային իրավահարաբերությունից, թիվ ՎԴ/7379/05/21 գործը ենթակա է ՀՀ վարչական դատարանին:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

թիվ ՎԴ/7379/05/21 գործն ըստ հայցի Երեմիա Ասատրյանի ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության՝ 2021 թվականի հունիսի 24-ի «Սնանկության գործով կառավարիչների որակավորման ստուգման խնդրի լուծման փուլի մասնակից Երեմիա Ռուբենի Ասատրյանի բողոքի վերաբերյալ» որոշումը մասնակի՝ միջամտող դրույթների մասով, վերացնելու և պատասխանողին հայցվորի բողոքը բավարարելու, սնանկության գործով կառավարիչների որակավորման ստուգման 2-րդ՝ խնդրի լուծման փուլում անցողիկ միավորով գնահատելու և սնանկության գործով կառավարիչների որակավորման ստուգման 3-րդ՝ հարցազրույցի փուլ անցած մասնակիցների ցուցակում ընդգրկելու մասին բարենպաստ վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու և որպես հետևանք պատասխանողին հայցվորին սնանկության գործով կառավարիչների որակավորման ստուգման 3-րդ՝ հարցազրույցի փուլին մասնակցել թույլատրելուն պարտավորեցնելու, իսկ դրա անհնարինության դեպքում լրացուցիչ հարցազրույցի փուլ կազմակերպելուն և հայցվորին հարցազրույցին մասնակցել թույլատրելուն պարտավորեցնելու պահանջների մասին, ենթակա է ՀՀ վարչական դատարանին:

ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ